ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

17 մայիսի 2011թվական թիվ 31 - Ա

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ և ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728-ն հրամանագրի 1.6 կետով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 5 մայիսի 2011թվականի N 17 նիստի արձանագրության 2 – րդ կետի պահանջի համապատասխան կազմակերպություններում և համայնքներում մարդասիրական օգնության ու բարեգործական ծրագրերի շրջանակներում ստացված ապրանքների և մատուցված ծառայությունների ստացման, հաշվառման ու նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողություն սահմանելու նպատակով

կարգադրում եմ

1. Ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

1. Ֆ. Ափինյան - /Հանձնաժողովի նախագահ/ ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
2. Գ. Հարությունյան - Տավուշի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ
3. Ա. Հակոբյան - Տավուշի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ
4. Ժ. Խաչատրյան - Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ –տնտեսական զարգացման վարչության առաջին կարգի մասնագետ
5. Վ. Սուքոյան - Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության առաջատար մասնագետ
6. Հ. Փաշինյան - Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետի տեղակալ

2. Հանձնարարել հանձնաժողովին /նախագահ՝ Ֆ. Ափինյան/ կատարված ուսումնասիրությունների մասին ներկայացնել ամենամսյա տեղեկատվություն :

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2011թ. մայիսի 17
ք. Իջևան